

ՏԱՐԲԵՐ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐ



ԿԿՈՒ Մանկապատանեկան թերթիկ

ՄԱՐՏ Ա - 2024

թիւ - 9 -



Թիւր պատրաստեց
Մարտի Աշում-Ծաշնեալ
Նկարագարդեց՝
ՌԱՖԻՔ ՔԵԾԻՉԵԱԼ

ԺԱՅՈԵՐՈՒ ԲՆԱԿԻՉՆԵՐԸ (ԱՆԱՍԱՉԻՆԵՐԸ)

Մօտ հազար տարի առաջ, Հիւսիս ամերիկեան ցամաքամասին մէջ կը բնակէր անասազի հնդիկներուն ցեղը: Կայրը այսօր յայտնի է «Չորս անկիւն» անուամբ, ուր կը հանդիպին ամերիկեան նահանգներ (Նիու Մեքսիկոյի, Ջուլորատոյի, Արիզոնայի և Յուտայի) սահմանները:

Անասազիները իրենց տունները կը շինեին ուղղաձիգ ժայռերու մէջ: Անոնք կ'ապրէին գիտերու մէջ 60 հոգինոց մարդոցմէ բաղկացած խումբերով: Գիտերը կը կառուցուէին քարայրներուն մէջ: Յին հնդիկները այսպիսի ժայռեր կ'ընտրէին, որուն մէջ կառուցուած քարայրին մուտքը ըլլար դէպի հարաւ, եւ ներսը միշտ չոր ու տաք մնար:

Կացարաններու մէջ կային շատ սենեակներ, որոնք կը կոչուէին «քիւաներ»: Քիւաները գետնին տակ կ'ըլլային եւ նախատեսուած էին ժողովներու ու կրօնական հաւաքներու համար: Ժայռերու կատարներուն վրայ կը հսկէին պահակներ, որոնք թշնամիներ յայտնուելու պարագային բարձր գոչիւններով գիւղի բնակիչները կը զգուշացնէին գալիք վտանգ:




Մօտաւորապէս XII - XIII դարերուն, անասազիները յանկարծ լքեցին ժայռերուն մէջ շինուած իրենց գիտերը ու գացին դէպի հարաւ: Թէ ի՞նչն էր պատճառը, որ ստիպեց գիրենք այդպէս ընել մինչեւ օրս գաղտնիք կը մնայ գիտնականներուն համար...

ՈՐՈՇ ԵՆ ՊԻԳՄԵՅՆԵՐԸ


Պիգմեյները կ'ապրին Միջին ափրիկեան խիտ ու խոնաւ անտառներուն մէջ: Պիգմեյներուն յատկանշող բանը իրենց կարճահասակ ըլլալն է, նոյնիսկ տղամարդոց հասակը 1,3 մետրը չ'անցնիր:

Պիգմեյները հիմնականորեն որսորդութեամբ կը զբաղին:

Թէ ինչո՞ւ անոնք այդքան կարճահասակ են, յստակ չէ: Սակայն կարգ մը գիտնականներու կարծիքներուն համաձայն, անոնց կարծ հասակ ունենալուն հիմնական պատճառը անտառներուն մէջ ապրիլն ու այդ ապրելաձեւին հետ համակերպիլն է:



Կրնա՞ս երկու պատկերներուն միջև 8
տարբերութիւններ գտնել:



Գունաւոր՝ հետեւեալ
պատկերը նախասիրած
գոյներով:



Թիւերը յաջորդաբար միացնելով,
ամբողջացներ պատկերը:

ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

Ձեռքեր ունիմ, բայց չեմ ծափեր:

Ամպղջուն դվնիսնորոք
:ղորվոտուն

Վիզ ունիմ, գլուխ չունիմ:

Հվշ :ղորվոտուն

Կեանք չունիմ, բայց կը մեռնիմ:


(ովկումու) ճսիտուոյ
:ղորվոտուն

Ո՞ր ամսուան մէջ 28 օր կայ:

Ցյու դրսմբդովրում մասն
:ղորվոտուն

Երբ հայրս 31 տարեկան եր, ես 8 տարեկան եի:
Դիմա երբ հօրս տարիքը կրկնապատկուած է, ուրեմն
ես քանի՞ տարեկան եմ:

ղորհզմոտ 68
:ղորվոտուն



ՀԵՏԵՒՆՔ ԱՌԱԾՆԵՐՈՒ՝ ԴԻՌԱՅՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄԵՐ ԱՌՈՐԵԱՆ

Պարտաճանաչ աշակերտ մը ըլլալու համար հետեւեալ առածները միտքդ պահէ՛ եւ ընկերներուդ պատմէ՛:

- Այսօրուան գործը վաղուան մի՛ ձգեր:

Դպրոցական դասերու ծրագիրը կազմուած է եւ օրէ օր կ'աւելնայ, հետեւաբար զգուշացիր անհոգութենեն եւ պարտականութիւններդ առանց յետաձգելու լիուլի կատարէ՛:

- Գործը՝ ժամուան մը, հոգը՝ տարուան մը:

Պարտականութիւններով բեռնաւորուած ես, զանազան ծրագիրներ ունիս, կը նախընտրես հաճելին, դիւրինը եւ կամ կը խուսափիս բոլորէն, սակայն հոգիդ հանգիստ չէ, կը տառապիս, որովհետեւ գիտես, թէ բոլոր ծրագիրները քեզմով պիտի ամբողջանան: Ինքզինքդ հաւաքէ՛ եւ անմիջապէս գործի լծուե՛:

- Եղունգ ունիս գլուխիդ քերէ՛:

Աշխատանքներդ իրականացնելու եւ անոնցմէ յաջողութեամբ դուրս գալու համար ուժերուդ վստահէ՛:

- Լքէ՛ ինքզինք լքողը:

Յեռո՛ւ կեցիր անհոգ, անպատասխանատու եւ անտարբեր անձերէն, որուսը կրնան վնաս հասցնել քեզի:




ՊԱՏԱԽԱՎ՝ ՀԱՐՑՈՒՄՆԵՐՈՒԴ

ԿՐԱՆՔ ԲՈՅՍԵՐՈՒ ՀԱՆԴԻՊԻ ՍԱՐԱՐԱՅԻ ԱՆՊԱՏԻՆ ՄԵԶ

Այո՛, բայց գծագրութիւններուն մեջ Սահարայի անապատը ժամանակին խոտերով եւ մացառներով ծածկուած շրջան մըն էր: Անոր արեւադարձային բուսականութիւնը եւ կենդանական աշխարհը հարուստ էին: Ն ա խ ա մ ա ր դ ի կ ա ն ո ն ց մ է կը ներշնչուեին քարայրները զարդարելու համար:

Մօտաւորապէս 4000 տարի առաջ Սահարայի կլիման սկսած է փոփոխութեան ենթարկուիլ: Բազմաթիւ քաղաքակրթութիւններ, որոնք այդ շրջանին մեջ զարգացած են, ժամանակի ընթացքին անհետացած են: Սակայն անոնք ձգած են իրենց գոյութենեն հետքեր՝ բազմաթիւ քարայրներու պատերը զարդարող գծագրութիւններ, որոնք կը ներկայացնեն՝ կովեր, ձիեր, եշեր, փիղեր, վարդագոյն բոցահաւեր, գետաձիեր, բուեր, ջայլամներ....



ԱՄԵՆԵՇ... ԱՄԵՆԵՇ...

ԱՄԵՆԵՇ ԵՐԿԱՐ ՄԱՐԳՐԻՏԵ ՄԱՆԵԱԿԸ

150 մետր հասակ ունեցող մեկ շարքով մարգարիտ մանեակը ստեղծուած եւ ցուցադրուած է Միլանոյի (Իտալիա) նորաձեւութեան շաբթուան բացման առիթով, 17 Փետրուար 2006-ին: Մոսքեթթօ տը Ուան աւելի քան 12 հազար մարգարիտ գործածած է այդ մանեակը շինելու համար:

ԱՄԵՆԵՇ ԵՐԿԱՐԱՏԵՇ ԵՐԳԱՐԱՆԴԵՍ

Այս մրցանիշը կը պատկանի հունգարացի «Ազիամի» խումբին, որուն ներկայացումներն մեկը տեւած է 48 ժամ, 17-19 Մայիս 2006-ին, Պուտապեստի մէջ:

ԱՄԵՆԵՇ ՏԱՂԱՆԴԱՒՐ ԶՈՒԿԸ

Ալպերթ Այնշթայն 3 տարեկան կարմիր ծուկ մըն էր, որ կրցած էր վեց տարեեր իլրայատուկ հնարք ներկայացնել, ինչպէս՝ ֆութպոլ խաղալ եւ լիմպօ պարել: Չայն մարզած էր անոր տերը՝ ամերիկացի Տին Փոմերլօն, Փենսիլվանիոյ մէջ, Կիպսոնիոյ «Ֆիշ սքոլ»-ին (ծուկերու դպրոց) մէջ: